## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

09.12.2014 թվականի թիվ 16

### ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

*Ավագանին որոշում է.*

*1.* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրք սահմանել`

*-Հիմնական օբյեկտների համար.*
*ա)* Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տների, ինչպես նաև 200քմ մակերես ունեցող հասարակական և արտադրական օբյեկտների համար սահմանել` -7500դ.

*բ)* Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
*բ/ա)* 201-500քմ մակերես ունեցող օբյեկտների համար -15000դ.
*բ/բ)* 501-1000քմ մակերես ունեցող օբյեկտների համար -25000դ.
*բ/գ)* 1001-3000 քմ մակերես ունեցող օբյեկտների համար -35000դ.
*բ/դ)* 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50000դ.
-Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`
*գ)* մինչև 20քմ մակերես ունեցող օբյեկտների համար -1500դ.
*դ)* 20 և ավելի քմ մակերես ունեցող օբյեկտների համար -2500դ.
*2.* Համայնքի վարչական տարածքում` շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլատվության չնախատեսված դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`
*ա)* Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության: -1500դ

բ) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսված և նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարության, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում՝շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել. -2500դ

1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված է 0,5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի վարչական տարածքում՝ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլատվության համար՝

1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝վաճառք կազմակերպելու դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել -2500դ.

2) Ծխախոտի վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում՝ վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել -2500դ.

5. Համայնքի տարածքում՝

ա)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար, տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ -350դ. 1քմ-ի համար

բ)հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլատվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում -2000դ.

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում -1000դ.

6. Համայնքի տարածքում՝հանրային սննդի օբյեկտները, ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ -50000դ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -2000դ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -3500դ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ -1500դ

դ) դատարկ գովազդային վահանակների համար -700դ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ -600դ:

*2015 թվականի համար սահմանել տեղական վճարներ*

*1.* Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված, տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու, շինարարական ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների ծառայությունների փոխհատուցման դիմաց վճար սահմանել -1000դ

*2.*Տեղական ինքնակառավարման տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման աշխատանքների համար սահմանել վճար -500դ

*3.*Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար սահմանել վճար -500դ

*4.*Աղբահանության վճարի յուրաքանչյուր անձի համար սահմանել - 0դ:

Քվեարկություն

Կողմ դեմ ձեռնպահ

Ս. Սիմոնյան

Ա. Ալեքսանյան

Ռ. Մկրտչյան

Գ. Ներսիսյան

Համայնքի ղեկավար Խ. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

09.12. 2014 թվականի թիվ 17

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի և 31 հոդվածի պահանջներով ավագանին որոշում է.

Հաստատել՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, գյուղապետարանի և մանկապարտեզի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

| | | |
|---|---|---|
| *1.*Համայնքի ղեկավար | | -195000դ. |
| *Հայեցողական պաշտոն* | | |
| *2.* Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 հաստիք | -105000դ. |
| *Համայնքային ծառայողական պաշտոններ.* | | |
| *3.*Աշխատակազմի քարտուղար | 1 հաստիք | -120000դ |
| *4.*Առաջատար մասնագետ | 1 հաստիք | -105000դ |
| *5.*Առաջին կարգի մասնագետ | 1 հաստիք | -100000դ |
| Քաղաքացիական աշխատողներ | | |
| *6.*Օպերատոր | 1 հաստիք | -85000դ |
| *7.*Գրադարանավար | 1 հաստիք | -66500դ |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| *8.*Հավաքարար | 1 հաստիք | -66500դ |
| *Պայմանագրային աշխատող* | | |
| *9.*Աղբատար մեքենայի վարորդ | 1 հաստիք | -66500դ |

*2. Հովտաշենի մանկապատեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափը.*

| | | |
|---|---|---|
| *1.*Տնօրեն | 1 հաստիք | -95000դ |
| *2.*Դաստիարակ | 1 հաստիք | -60000դ x2 |
| *3.*Դաստիարակի օգնական | 1 հաստիք | -71000դ |
| *4.*Երաժշտության ուսուցչուհի | 1 հաստիք | -66500դ |
| *5.*Հաշվապահ | 1 հաստիք | -71000դ |
| *6.*Խոհարար | 1 հաստիք | -71000դ |
| *7.*Պահակ | 1 հաստիք | -66500դ |

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Սիմոնյան | | | |
| Ա. Ալեքսանյան | | | |
| Ռ. Մկրտչյան | | | |
| Գ. Ներսիսյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am


# *ՈՐՈՇՈՒՄ*

09.12.2014 թվականի թիվ 18

## *ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հովտաշեն համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները.

*Գյուղապետարան՝*

1. Համակարգիչ -3 հատ
2. Մոնիտոր LG -2 հատ
3. Մոնիտոր PHILIPS -1 հատ
4. Տպիչ-1 հատ
5. XEROX PHASER 3100MFP-1 հատ
6. XEROX SAMSUNG - 1հատ
7.UPS Mercury – 3 հատ
8.Գրասեղան - 4 հատ
9.Չիրկիզվող պահարան - 4 հատ
10. համակարգչային աթոռ - 4հատ
11.թվային տեսախցիկ -1հատ
12.գազօջախ 3կգ -1 հատ
13. փափուկ կահույք -1 հատ
14.հեռուստացույց—1 հատ
15.շերտավարագույր - 5 հատ
16.աթոռ -12 հատ
17.պահարան -3 հատ
18.սառնարան -1հատ
19.խոհանոցի անկյունակ սեղանով -1 հատ
20.էլ. տաքացուցիչ-3 հատ
21.տաք և սառը ջրի ապառատ -1հատ
22. մեծ գրասեղան կողասեղանով -1 հատ
23. գրասենյակային աթոռ մեծ -1 հատ
24.լվացարան -1հատ

*Գրադարան՝*

1. Երկաթե գրապահարան - 22 հատ 1մ *1.75 մ
2. մեծ սեղան -1 հատ
3. փայտե գրապահարան -1 հատ
4. աթոռ -5 հատ

*Մանկապարտեզ՝*

1. մահճակալ -30 հատ
2. խոհանոցի կահույք-1 հատ
3. պահարան խոհանոցի-1հատ
4. հանդերձապահարան-1հատ
5. խաղալիքների պահարան-2 հատ
6. հանդերձապահարան մեծ-1 հատ
7. գրապահարան -4 հատ
8. սառնարան -1 հատ
9. գազօջախ -1 հատ
10. հեռուստացույց -1հատ
11. ջահ -9 հատ
12. կախիչ -10 հատ
13. շերտավարագույր -4 հատ
14. վարագույր -9 մետր
15. կառնիզ -12 հատ
16. աստիճան -1հատ
17. փոքր աթոռ -30 հատ
18. մեծ աթոռ -10 հատ
19. աթոռ մեծ կաշվե -1 հատ
20. սեղան փոքր -10 հատ
21. սեղան մեծ -2 հատ
22. լվացարան -3 հատ
23. աղբաման -2 հատ
24. համակարգիչ -1 հատ
25. տպիչ -1հատ
26. դաշնամուր -1 հատ
27. փոշեկուլ -1 հատ
28. գազ «5կգ» -1 հատ
29. արդուկ -1հատ
30. էլեկտրական վառարան -1հատ
31. ջրի պոմպ «նասոս»-1հատ
32. ներքնակ -30 հատ
33. անկողնային կոմպլեկտ -26 հատ
34. դուռ – 5 հատ

Քվեարկություն՝

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ս. Սիմոնյան | | | |
| Ա. Ալեքսանյան | | | |
| Ռ. Մկրտչյան | | | |
| Գ. Ներսիսյան | | | |

Համայնքի ղեկավար Խ.Խաչատրյան